

Ե Զ Ն Ի Կ Ի Ե Ղ Ծ Ա Ղ Ա Ն Դ Ո Յ Ի

ԲՆԱԳԻՐ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆՅ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՔՆՆՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն տես Բազմավէպ 1929, էջ 97)

ՔՄԻՈՒՆ. ՏԳ.	ՌԿՄ. ՏԳ. - ԴՈՒՐՅԱՆ ՄԲԱ.	ԱՃ. - ՏԵՐ ՄԿՐՏՁ. ՁԵՆԱԳԻՐ
էջ. տող.	էջ. տող.	
177 8 ինքնակայք գոլ է ազիտաց	194 23-4 ինքնակացութեան ազիտաց կարծիքին	
19 փառատրութիւն	195 6 ի փառատրութիւն	փառատրութիւն
178 1 պարզապէս ասէ թէ	7 յորժամ ասկէ	(հոյ՞ք ընդ վեճեցեալեան)
5-6 զարբանակութիւնն կատարեն	12-13 զարբանակութիւնն հարկանեն	(հոյ՞ք ընդ վ.)
20-21 անժամութիւնն	196 7 անժամութիւնն	(հոյ՞ք ընդ վ.)

195, և... փառատրութիւն՝ ուղղելի փառատրութիւն? Այս սրբագրութիւնը Հ. Գ. Մէնէ-վիշեանի առաջարկն է, որուն կը հետնի Աճառեան ակ' քննելով է ապացուցանելով թէ սոկրատիստ ուղիղ ձևն է փառատրութիւն. իսկ փառատրութիւնը յիտադարեան ձև է. և ըստ Մէնէ-վիշեանի, ինչպէս կ'ըսէ Աճ. ալ, փոփոխութիւնն առաջ եկած է տըր-տըր չի և ո՞ր միացումէն:

Սակայն խնդրին այնքան պարզ և դիրքին չէ, ինչպէս կը համարի Աճառեան Մէնէվիշի հետ: Բառի մ'ոսկեղարեան ըլլալը անշուշտ նոյն դարու հեղինակներու քով գործածութենէն է որ կարելի է հետևցնել:

Բայց չեմ հասկնար թէ ինչպէս Մէնէվիշեան, հակառակ իր այս սկզբունքին սեղմ առումին, որ. փառատրութիւնը խորք կը նախարի ոսկեղարու հայերէնին, և սակայն իզնիկ, կոչ. ընծայութեան, Ազաթ. Ոսկեք. ևն, կարենա՞յ այդ ձևն ունին: Ուրե՞ն... ուրե՞ն, կ'ըսէ, այդ բարձր մէկ օրինակութիւն մ'է ամէնուն քով ալ. և այսպէս կը համարի լուծած ըլլալ խնդիրը — ի՞նչ է մէկ օրինակ կամ հեղինակ կասկածելի համարիլը ներելի է, նոյն տեղով վարուել շարժերուն հետ ալ դիրքին չէ, զէ՞ք համոզիլ չէ. մանաւանդ թէ ըսել ի յառաջգունէ որ խորք ձև է փառատրութիւնը ոսկի դարուն, և յետոյ ըստ այնմ սրբագրել բոլոր հեղինակները՝ յոռի շըջանի երևոյթ չի՞ տար: Ի՞նչ է մեղքը տար-տըր-տրութիւն = փառատրութիւն ձևին որ ոսկի չ'ըլլար եղեր, և անդին կ'ըլլայ դիր-դըր-գրութիւն = ձևնադրութիւն. որքան դիրք, նոյնքան տարը հայերէնն ևն, արմատներ են. ինչպէս կարելի է ապացուցանել, փաստել թէ յիշուլ օրինակը ազառագում մ'է իզնիկ, կոչ. ընծայութեան, Ազաթանգեղոսի քով:

Այլուր կը բաւականանանք մէկ հեղինակի քով իսկ գործածութենէն հաստատել բոսի մը ոսկեղարեանութիւնը. ինչմ. տարբեր չափ և կշիռ:

Այնու հանդերձ խնդիրը կը թողուցը վճռել մուտ հայագէտներուն և հնագոյն ձեռագիրներուն: Միայն աւելցնենք որ անհիմն և յանգուցն զրպարտութիւն մ'է Աճառեանի ըսածը՝ եթէ Բազմատուկի մասին ալ առնենք, « փառատրութիւն զնել գոնէ այս օրինակներուն մէջ հրատարակիչներուն դիտաւորեալ գործն է ». քանի որ գիտենք թէ ան խղճմտօրէն և երն ու ներն անգամ զանց չ'ընեն սրբագրել Զմ. օրինակին վրայ՝ ըստ Գէորգեան Ձ.ին:

Առիթ ունեցանք մեր յողաածին նախորդ մասերուն մէջ ակնարկել թէ ինչպէս Աճառեան, Բաբգէն Ա. և Մարիէս շատ կասկածով կը նային Գէորգեան-Բգրտ. սրբագրութեանց վրայ, որպէս թէ բոլորովին քմահաճ, անհիմն, անիրաւ ըլլան. սակայն մեր յարգելի ընթերցողները պիտի տեսնեն համեմատական սիւնակներու մէջ թէ ո՞րքան համաձայն ևն Բգրտ-Գէորգեան ուղղութիւնները Աճ. նորագիտ Ձ.ին հետ. մանաւանդ սխալագիր, աղճատ Աճ. Ձ.ը կը վերականգնի, կը նորագուծ միւտով. որով միւտ կողմէն միւտ պիտի դուրս ցայտեն Զմ. տպագրի ազէտ, քմահաճ, անհիմատ և անսեղի փոփոխութիւնները, խնդրաբարձները, յաւելումները և անհարկի մեկնութիւնները՝ հաւատարմ վերն յիշուած յարգելի բանասէրներուն՝ որո՞ք յատուկ ճիշտ մ'ունին զայն փառաբանելու. բայց պիտի տեսնեն որ մեզմէ առաջ Աճ. Ձ.ն է որ զիրենք կը դատապարտէ:

էջ. տող.

էջ. տող.

ձևի եր.

Թէ հրեշտակք և ալլը ոչ են անստեղծք

179	14-15	էթէ ոչ է շորութենէ և է հոյ	22	4թէ ոչ է բնութենէ հոյ	(ճոյն ընդ Վ.)
180	11	մարմին. ի վերոյ	197	16	մարմին և (ի) վերոյ մարմինն և ի վերս

ձևի եր.

Չկարելի աստեղաբայից եղծանէ, ըստ Հասարակ շտապագովելով զամենայն. և թէ լուսաւորք չեն կենդանիք:

181	6-7	զի ամենայն ինչ որ չէր և եղև արարած է, և ոչ ինքնակայ:	198	7-9	զի ամենայն ինչ որ չէր և եղև՝ արարած է և ոչ ինքնակայ:	և զի ամենայն ինչ որ կրնի արարած է (յիք չէր և և եղև)
12	վասն որոյ ոչ Հեղատարար	15	ոչ Հեղատարար (յիք վասն (յիք վասն որոյ) որոյ)			

ԳԻՐԳ ԵՐՐՈՐԴ

(յիք)

Եզո՞ կրօնից յունաց իմաստնոցն

19	եօթն աստեղք միայն են զը. նայունք	199	12	եօթն աստղ միայն է զնայուն (ճոյն ընդ Վ.)		
182	20-21	յորմէ կուտ արեգակն իցէ, յայնմ կուտ սկսանի	200	20-21	յորմէ կուտ արեգակն ի. ցէ, յայնմ թերէ սկսանի	(ճոյն ընդ Վ.)
183	12	զուգեմիջիո զէզ արեգակն պատահիցէ	201	16	կշիռ զէզ արեգակն պատահիցէ	(ճոյն ընդ Վ.)
14	(փոփոխմանց) աստերաց	18	աստերաց		(յիք աստերաց)	

Սկսիկք հոս մատենանչև անոնցմէ մի առ մի: Եզնիկ, միշտ ճարտար սկի լեզուին բառերուն և բացատրութեանց ընտիր ձևերուն, օր. 195, 7 կը դնէ «ի պաշտօն մտաննն և զարբանեկութիւն հարկանն... պաշտօն մատուցանի» (196). Չմ. զուրկ սովորէն լեզուի ճաշակէն՝ կը խեղաթիւրէ՝ դնելով կատարեն՝ փոխանակ հարկանննի:

196, 12. — Նայն ռոճով Չմ. կը դնէ անմտութիւն փոխանակ անհամարժեքի:

196, 22. — Գարձեալ, ՍՏ. և Գէորգ-Բգրտ. ունին «Եւ փայլատակունք ոչ եթէ այլ ուստեք են եթէ ոչ ի բնութենէ հոյ», Չմ. կը փոխէ... «եթէ ոչ ի յորութենէ հոյ»: Նայնն ըսելու ենք 199, 12ին համար:

198, 15. — Քմանճ յաւելում մը «վասն որոյ» որ գոյութիւն չունի ոչ ՍՏ.ի և Բգրտ.ի քով, մանաւանդ թէ յետինս զայն ձգած է:

200, 20-21. — Բգրտ-Գէորգեանն ունի «զի յորմէ կուտ արեգակն իցէ, յայնմ թերէ...» հմտ. ՍՏ. Զի. մինչ Չմ. պէտպիսութիւնը կը ջնջէ երկու անգամն ալ կուտ դնելով:

201, 16. — Բգրտ-Գէորգ-ՍՏ. ունին «կշիռ» (= ճիշտ ճիշտ). Չմ. ապ.ը կը փոխէ «զուգեմիջիո» ուր սակայն ամենին տեղիք չկայ ոչ զուգակշիռի և ոչ բաղդատութեան:

202, 8-12. — Պարզապէս տգիտութենէ անաջ կեած ըլլալու են աստուածութիւնս՝ փոխանակ աստուածութիւն, և (202, 12) ի շնորհաբանէ՝ փոխանակ ի շնորհաբան:

215, 9-10. — Չմ.ի քմանճութիւնն է որ (զաշտ) ունելը՝ փոխեր է փակիչի, ինչպէս:

228, 1. — Չմ. «Չամենայն էս միտքն նկատել մարթի», մինչ Բգրտ-Գէորգեանն համեմատ ՍՏ. Զ.ի ունի «զամենայնէ մտքն նկատել մարթի»:

229, 2-4. — Հոս ալ Չմ. ապ.ը ապականեր փնացուցեր է Եզնիկի գեղեցիկ բացատրութիւնը «Չորս և փիլիսոփայքն ինչ յրկնաց քերեն»՝ դնելով «... զմիտս նպերեն»: Նայնպէս շիներ ու տեղեկութիւն 231-232 (տե՛ս հմտոկն. սրահակները):

Յարեք շեշտած համարներն ու բառերը պարզապէս տգիտական ու քմանճներն էին, որոնց ուղիք ձեռ տեսանք Գէորգ-Բգրտ.ի քով՝ համեմատ և համաձայն (բաց ի ՍՏ. Զ.ի սխալագրութեանէ) ՍՏ. Զ.ի հետ. հիմա կ'անցնինք մատենանչելու և քննելու կարևոր սխալներ որոնց մասին՝

էջ. տող.

ՀԱՌ ԵՑ.

էջ. տող.

Մուրեալը ի ճանաչմանն Աստուծոյ ընդ բազումս մուրքին			
184	11-12 զաստուածութիւնս խըն-դրէին	202	8 աստուածս ինդրէին աստուածս ինդրէին
	14-15 ի միողէ ճաշարտու-թիւնէ	12	ի միողէ հշարտուեմ
	6 Եղ կրօնս Պիւթագորաս	204	9 Եղ կրօնս Պիւթագորաս
186	19 ցասնական	204-5	ցասնական
187	9-10 և ալս աշխարհի, զլուսու-ստորան:	205	19-20 և ալ՝ զլուստուրան:

ՀԱՌ ԵՁ.

Կապալաշտութեան պատճառ Սերուք. գրօշեալթն ի թա-րոյն:			
184	8 ի նկարս հանէին. և գրօշեալս	206	11-13 ի նկարու ճանէին, ևս առ-տի ուսեայ տիւնարաց՝ տա-կու ի պարտոս առնոյին: Եւ կոոց և գրօշեալս
	14 իւրացանչիւր ոք ըստ արուես-տիցն	20-21	իւրացանչիւր ոք իւրով (ճոյճ ընդ Վ.)
	19 առ կիկրողէս, և ևս յետոյ յառանել ստասիկց առ կոօ-նան, և Ռէաւ, և Գիօսաւ	206-7	առ կիկրողէս. և ևս յետոյ առ կրողէս և ևս յետոյ առանել ստեղ առ կրօնան և ըլաւ և դիաւ և ըլաւ և դիաւ
189	10 Միբոս մանեցին կրէն	207	13 Միբովս մանեցին կրէն միբովս մանեցին կրէն

բնագիրներու մթուօթիւնն ու սկզբնական ձևը գտնելու համար՝ զանազան թեր ու ղէմ կարծիք-ներ յայտնած են բանասէրներ:

Անկողմնակալ և հշարտաստէր ընթերցողները պիտի տեսնեն նախ վաւերացումը Բագրատ-Գէորգեան անթիւ սրբագրութեանց. յետոյ առանելութիւնը Գէորգեան Ձ.ի՝ ԱՏ. Նորագիտ Ձ.ին քով, ուսկից նաև կը հետևի թէ մանեկին չեն կրնար նոյնացուիլ այդ ձեռագիրներն, ինչպէս Չաւնացած էինք սպաշուցանել մեր յօդուածի նախաբանին և ընթացքին՝ հակառակ Աճառեանի, Մարիէսի և այլ հեղինակներու:

Հուսկ պիտի տեսնուի որ ԱՏ.ի, Հ. Գ. Վ. Նահապետեանի, Մարիէսի և ուրիշներու ինչ ինչ սրբագրութիւններն և առաջարկները զոր բրած են Բգրատ. օրինակին մէջ, պարզապէս տպ. սխալ-ներ են, ինչպէս պիտի տեսնենք սիւնակներուն և մեր դիտողութեան մէջ. աստի գոհունակութիւնը կ'ունենանք որ մեր աշխատութիւնը եթէ բանասիրական ոչ մէկ արժէք ալ չունենայ, զէթ քննա-կան լաւագոյն սպաշուցութեան մը առաջը կը մատակարարէ:

197, 16. — ԱՏ. ունի զի վերոս, Նոյնպէս Ձմ. «ի վերոյ»։ վննետկանին մէջ տպ.ի սխալ է ի ի պակասը, և այս անկից յայտնի է որ Բգրատ. անշինչ, անաղարտ թողած է Ձմ. օրինակը: Հոս զովելի է Աճառեան որ առանց տեսած ըլլալու Ձմ. օրինակը գուշակած է թէ «տպագրական սխալ կը թուի վերոյ»:

198, 7-9. — Հոս կը տեսնուի մեր շնչած մէկ կէտը, այսինքն ԱՏ. Ձ.ի թերին ինչպէս և ոչ-նոյնութիւնը Գէորգեանի հետ. վասն զի Ձմ. օրինակն ունի «Արդ զի երկինք ոչ չըջին զի ա-մենայն ինչ որ չէր և եղև՝ արարած է և ոչ ինքնակաց, առաջին բնութեանցն օրինակք և գրօց վկայութիւնք բաւական էին հաւանեցուցանել զմտավարժս»։ ընդգծեալ մասը անաղարտ թողած է Բագրատեանի, յայտնի է Գէորգեան Ձ.ի հեղինակութեամբ, մինչ անդին ԱՏ. Ձ.ի մէջ կը պակսի այն: Թերի մըն է ըսինք այդ պակասը ԱՏ.ի քով. քանի որ առանց անոր՝ կաղ և անիմաստ կը մնայ խօսքը, ինչպէս առաջին ակնարկով պիտի տեսնուի:

206, 11-13. — Բագրատունի Գէորգեանի հեղինակութեամբ աւելցուցած է վննետկեան տպ.ին մէջ «Եւ անտի ուսեայ տիւնարաց՝ տակաւ ի պաշտօն առնոյին» ամբողջ խօսքը, որ սակայն կը պակսի

1. Գն. և ՀՏՄ. ևն էջ 80-81.

էջ. տող.

էջ. տող.

ձևի տէ.

	ի բնութիւնս իրաց գլխատուած ինդրեցն գովելի. և թէ Աստուծոյ էութիւնս անհազոր-գիւի է:	(ձիք)		(ձիք)
190	7 ի միտն անկեալ է	208	9 ի միտն (ս)նկեալ է	ի միտն անգեալ է
191	(և թէ մարթեցի) Աստուծոյ շունչ առէլ, զամենայն սուրբածս, զընչաւորս և զանշունչս բնութիւնս	209	6 թէ մարթեցի Աստուծոյ շունչ ստեղ, ամենայն արարածոց շնչաւորաց և սնշնչից բնութիւնս	(ճոյճ ընդ Վ.)
5-6	անհնարին ամբարշտութիւն է	10	անհնարին ամպարշտութեանն է	(ճոյճ ընդ Վ.)
20	յեանն Հայհոյութիւն է	210	4 յեանոյ Հայհոյութեանն է	(ճոյճ ընդ Վ.)
192	1-2 մի թերին յանուշս և միս թերին ի դոխոս:	11	մի թերին յանուշս և միս թերին ի դոխոս	մի թերին յանուշս և միս թերին ի դոխոս
6	անկեալք սերման	18	(ս)նկեալ սերմանք	անկեալ սերմանք (Հմտ. 211. 5)
21	(ի պարզական և) ի սուղական բնութեանէ	211	13 ի սուղական բնութեանէ	ի սուղական բնութեանէ
198	4 բնական և անզգայական շարժմունք	20	բնական և խաղացական շարժմունք	բնական և խաղացական շարժմունք.

ձևի տէ.

Դեք գրեութիւնս իրաց ոչ կարեն փոփոխել

194	19 Զի քոցանիցէ թէ Աստուծոյ գործ է և ոչ այլ ուրուք:	213	5-6 զի ստեղէ թէ իմ գործ է և ոչ այլ ուրուք:	(ճոյճ ընդ Վ.)
195	8 իբրև զանական շրջեցին	15	իբրև զընչանն շրջեցին	իբրև զընչանն շրջեցին
16	յերկինս ստուերէ լինի	214	7 յերկինս ստուերէ լինիցի	յերկինս ստուերէ լինիցի

Զմ. տպ.ին մէջ: Մարիէս, Բաբգէն Ս. և Աճ. պիտի փորձուէին ըսել թէ Բագրատունիի քմահաճ ձեռքն ըրած է զայն, թէ շուրջ հարիւր տարի վերջ չգար զայն վաւերացնել և հաստատել նոյն ինքն Աճ.ի նորագիւտ Զ.ը: Հոս ստիպուած ենք ըսել թէ ո՞րքան թեթեւաբան շարժած են Աճառեան և իր համակարծիքները զրպարտելու Բագրատունին՝ առանց սեսնելու Գէորգեան օրինակը ինչպէս և Զմ. կրկին օրինակները որ շատ դժուար չէր, և կը պահուին մեր վառքի Հայկ. Մատենադարանին մէջ:

206, 26. — Հոս ալ վնեւեկեանին մէջ պարզապէս տպ.ի սխալ է կեկրոպեաւք, զի Բագր. սրբագրած է Զմ.ի վրայ կրովպեաւ՝ հմտ. Աճ. Զ.ին:

206-7. — «Եւ ես յետոյ առանչ աստիք առ կոռնաւն և Ի՛շաւ և Դիաւ և Ապողոնիւ և առ այլոցք բազմօք, զորս մի ըստ միոյնէ աստուածս անուանէին»:

Հ. Գ. Վ. Նախապետեան ընդգծեալ բառերը կ'առաջարկէ ուղղել՝ առանչյան դիք, յայտնի է մէկ երկու գրի փոփոխութեամբ. և կամ «Եթէ յատուկ անուան տեղ ընդունուի՝ յարմար թուի ուղղել առ Հոովմայեցիս»:

Հայկազեանի հեղինակները սակայն անաղարտ պահելով ձեն և ընթերցումը, աստիքը տարբեր իմաստով առեր են, այսինքն տալով «հաստատութիւն, պնդութիւն, զօրութիւն» անշուշտ ուղելով մեկնել և կապել նախորդ խօսքը «Եւ անաի կարգեալ հասանէր յեզիպատացիս և ի բարեկնացիս և ի փոխկուացիս և ի փրկելիկեցիս գործ դրօշագործութեան և խորհուրդ նորին» և ապա այս կրկին շնչուած շարժքը կը հասնէր «ի Հելլէնս, որ են Յոյնք, առ կեկրոպեաւ (ուղիղ՝ կրովպեաւ), և ես յետոյ առանչ աստիք» այսինքն աւելի ուժգին, պիկնդ, հաստատուն՝ կոռնոսի, Ապողոնի ժամանակ զորս (Յոյնք = Հելլէնք) մի ըստ միոյնէ աստուած անուանէին, և իբաւ որ կռապաշտութիւնը յաճորդ շրջաններու աւելի հաստատուեցաւ և աստուածները շտացան, ու անցան Հոովմ. ըստ իս այս մեկնութիւնը լաւագոյն է՝ յեցած Հայկազեանի հեղինակութեան, մինչ Հ. Գ. Վ. Նախապետեանի «առանչյան դիք» յոքան ալ գիւտաւոր՝ սակայն պէտք ունի ձեռագրի թեթեւ

1. Ուղղ. ազգ. մտար. էջ 287.
 2. Տես առաի, էջ 319, « սիւնակ ».

էջ. տող.

էջ. տող.

ձև ԵԹ.

1 լուսինն ու ասորու լայս
 196 16 ալս կամին քակել
 197 16 ծանրանայ
 28 որ պատահելով լուսինն
 194 1-8 Եւ ոչ ասող ցածագոյն զոյ
 ցան զլուսինն. թէ ի ներ-
 ցոյ նորս հանդիպեալ զնա
 խաւարեցուցէ

(188)
 215 9-10 ալս կամին ունել
 216 10 ծանրանայ
 20 որ պատահելոյ լուսինն
 21-24 Եւ ոչ ասող ցածագոյն
 զոյ ցան զլուսինն. թէ ի ներ-
 ցոյ նորս հանդիպեալ զնա
 խաւարեցուցէ. (188)

ձև Կ.

1 լուսաւորքն խաւարին աւէ՛
 յԱստուծոյ և ոչ լուսինն
 յերկիր իջնէ
 199 5 որում չեն մարթ ասնել
 4 զիւր նմանել լուսնի բար-
 բանջին
 2(10) 7-8 Մուրհիցան և պաշտեցին
 12 (188)
 201 2-8 օրով Թափանց անցեալ

(188) (188)
 217 14 յորում չեն մարթ լինել
 16-17 զիւր նմանել լուսնի բար-
 բանջին
 218-219 սպասաւորեցան և պաշտե-
 ցին (ճոյճ ընդ Վ.)
 219 8-11 Եւ վկայեցին նոցա Հերա-
 կի արձանքն՝ յորս գրեալ
 է, ասն, թէ յայտ վայրէ
 ոչ անոր մի ժուեցի երթալ,
 220 3-4 օրով Թափանցանց անցեալ (ճոյճ ընդ Վ.)

ձև ԿԱ.

Թէ Աստուած և տեսութիւնն
 ոչ են զանազանք. և վասն
 մաւրութեանց Արթագրայ

(188) (188)

փոփոխութեան մը՝ որուն թոյլատու չեն թուիր Գէորգեան և Աճառեան ձեռագիրները: Յետոյ Ջմ. տպն. ալ ջանացրէ է փոխել դնելով աստիքի տեղ սաստիկ: Իսկ ուղղել Հռովմայեցիք՝ ան- հաւանական է, քանի որ բնագրին բոլորովին հակառակ է և իմաստն ալ չի պարզեր:

Գոյցէ ոմանք աստիքը մակբայօրէն առնեն, սակայն խօսքին կամքը «Եւ ևս յետոյ առաւել աստիք առ կռտնաւ...» ըստ իս դժուար է թէ զօգուր նախորդ մասերուն հետ՝ ինչպէս կարելի է տեսնել բնագրին մէջ:

208, 9. — Ջմ. տպ.ը ունի տնկեալ զոր չէ սրբագրած Բագրատունի, բայց վննեղեանին մէջ վրիպելով տնկեալ է ապուած. Աճառեան անտեղեակ ասոր՝ կը շնչոէ թէ տնկեալ պիտի ըլլայ, նոյնպէս Հ. Գ. Վ. Նահապետեան, բայց տարակուսեցով(?) կ'առաջարկէ տնկեալ. Ջմ. օրինակը տարակոյտի տեղիք չի թողուք, թողուք որ իմաստն ալ տնկեալ կ'ուզէ. «Արգ ի խնդրին փիլի- սոփայից զԱստուած ի բնական օրինաց՝ որ ի միտն տնկեալ է» ինչպէս Հ. Գ. Վ. Նահապետեանի ալ կը շնչոէ: Մարիէս յեցած Աճ. Ջ.ի հեղինակութեան վրայ, ինչպէս իմաստի պահանջէն կ'ըսէ. «C'est la leçon du manuscrit: տնգեալ (= տնկեալ) bien meilleure que Ven. տնկեալ simple faute d'impression»:

Նոյն ոճով «չէզոք մարդկան և անասնոց տնկեալ սերմանք» (210, 18) ի մէջ տպ.ի վրիպակ է ընդգծեալը, ուրիշն է տնկեալ ինչպէս ունի Ջմ. գոր չէ սրբագրած Բագրատունի, հմմտ. Աճ. Ջ.ի:

210, 9-12. — «Կէտն ի փառս և կէտն յանարգանս, մի քերիւն յանոյշ և միւս քերին ի դժոխս»: Հոս Նորայր՝ կը դիտէ. «Թուր թէ կարգալու է քերին. աչխիւքն կողմն» և մէջ կը բերէ Եզնիկի ուրիշ երկու խօսքեր (էջ 27, և 200) ուր միշտ քիւր է և ոչ թէ քերի. նոյնը կ'ուզէ ապա- ցուցանել Ս. Կիրեղ Աղբս. Թուրց մեկնութեան մէկ խօսքէն ալ ուր նոյնպէս քիւր է (Թերէ):

1. Ուզգ. ազգ. մանգր. էջ 287.
2. Անտ. 287.
3. Revue Ան. էջ 81 (163).
4. Հմմտ. 211, 5.
5. Հյ. Բոգն. էջ 89-40.

էջ. սող.	էջ. սող.	
202 10 զորութիւն ինչ իցէ	221 2 զորութիւն ինչ (ինչ) իցէ	զորութիւն ինչ ինչ իցէ
11-15 գմբողէ միութենէ տայ, և զինամակաւութիւնն ևս եկէր զմանէ զնէր, զեղեցիկ և զովութեան արժանի կարգէր: Բայց զի գայլմէ զպատճառան կարգէ՝ և գայլմէ զինամակաւութիւնն	5-9 ի միտէ միութենէ տայ՝ և զինամակաւութիւնն ի եւ-մանէ զնէր, զեղեցիկ և զովութեան արժանի կարգէր, Բայց զի գայլմէ զպատճառան կարգէ և գայլմէ զեւ-նամակաւութիւնն	(ճոյճ ընդ Վ.)
208 17-18 վատթարագոյն	222 12 վատթարագոյն	յիջ վատթարագոյն
21 մեղիւն	15 ի մեղիւն (մեղիւն)	ի մեղիւն
204 2 ի մարմոց զենչեացն	20-21 ի մարմոց անտի	ի մարմոց անդի
6 աստուած աստուածոց	228 1 աստուած աստուածոց	աստուած աստուածոց
17-18 Եւ Հինգամայ լուսթիւնն զոր նորա յաշակերտութիւն եկելոցն սաՀմանեաց	16-17 Եւ Հինգամայ լուսթիւնն զոր նոր յաշակերտութիւն եկելոցն սաՀմանեաց	... զոր նորա ...
206 7 զի ոչ եկն ի միտ ըստ բանի	224 7 զի ոչ եկն ըստ բանի	(ճոյճ ընդ Վ.)

Սակայն համամիտ չենք Նորայրի՝ բերի ձեռք անհարգատ նկատելու քանի որ Զմ-Բգրտ-Գէորգ-Սճ. Զ համաձայն են բերին զենելով: Հյկզ. Բառարանն ալ վաւերական կը համարի բերին տալով անոր յատուկ նշանակութիւն՝ նոյնարմատ զենելով բերի-բերի = կիս, կողմնական, պակասատր իմաստով, ինչպէս որ ստուգիւ ամբողջ համարէն կը տեսնուի, ուր իբր հոմանիշ են կիս և բերի:

211, 13. — «Զի մարմինն և նոցա ի չորից հիւթոցն կայ, և ոգին ոչ ի չորիցն հիւթոց յոգելոց, այլ ի պարզական և ի սուղական բնութենէ»: Վենետիկան օրինակը սուղական է սակայն սպ. ի սիսալ է այդ, վասն զի յայտնի փաստ ունինք որ Բազրատուի սուղական ընդունած է համեմատ Գէորգեանի, քանի որ Զմ. օրինակին սակական իսթարուսն ուղղուած է սուղական՝ համեմատ Սճ. Զ.ի: Նոյն ձևն ընդունած են Հյկզ. Բառարանի հեղինակները յատկապէս Եղիշիկի այդ օրինակը մէջ բերելով. ստով բնաւ տարակոյտ չի մնար որ տպագրական վրիպակ մ'է այն: Զարմանալի է որ նոյն տրամաբանութիւնն է որ կ'ընէ Սճ. Բայց փոխանակ ուղիղ հետեանք հանելու՝ քմահանճոյք կամ սոքտութիւն կ'ենթադրէ. «ասից կրնանք հետեցնել ինչ որ վերը ըսինք, այն որ եթէ չիշեալ ընթերցուածը տպագրական սխալ մը չէ, յետին հրատարակչաց անճահ և քմահանճ մէկ սրբաբանութիւնն է»¹. չեմ գիտեր թէ ո՞վ են յետին հրատարակիչները, մինչ իր օրինակը նոյն ինքն Բազրատուի ձեռքէն ելածն է, առաջին սպ. վենետիկանն², որուն վրայէն եղած են փա-րիզեանն³ և Կ. Պոլսեանն⁴ բոլոր տպագրութիւններն անխտիր. և այդ տպագրութիւններն են որ առանց բացառութեան ունին սուղական ձևը:

216, 10. — «(Լուսին) շուրջ զանօթոնք ժանրամայ»: Ղնդգծեալն այսպէս ունին Զմ-Բգրտ-Գէորգեան, սակայն Գալիեմբար յաշող սրամտութեամբ, ինչպէս Մարիէս⁵ ալ կը խոստովանի, սրբագրած է ծրանայ զոր կը վաւերացնէ Սճ. նորագիւտ ձեւագիրը ունենալով նոյնպէս ծրանա ձևը: Մարիէս ալ իր կարգին կը հետեի Գալիեմբարի և Զ.ի հեղինակութեան: Մինչ Գալիեմբարի տեսութիւնը կը շնորհաւորենք, կը մատնանշենք միանգամայն այս կէտը ուր Սճ. Զ.ը առաւելու-թիւն մը կը ներկայացնէ Գէորգեանի վրայ:

217, 16-22. — «Գիւի նմանել լուսին բարբանջեն»: այսպէս ունին Զմ-Բգրտ-Գէորգեան և Սճ. Զ.ը: Մարիէս «Գիւի նմանել»ը կ'առաջարկէ ուղղել գտտին մանկը, պնդելով թէ «la fin du phrase nous paraît exiger qu'il ait été question auparavant des mamelles de la lune»:

Սակայն մենք ալ, որքան որ ալ տեսնենք իմաստի նուազ պայծառութիւն, ստիպուած ենք Աղոնցի հետ կրկնել թէ այդ սրբագրութիւնը «կամայական վարկած է»:

219, 8-11. — «Եւ վկայեցեն նոցա Հերակլի արձանքն յորս գրեալ է ասնն, թէ յայտմ

1. Գրն. և հմտ. Լն. էջ 81-82.
 2. 1826.
 3. 1860, էջ 196, 1.
 4. 1864, էջ 196. 1878, էջ 196.
 5. Revue Լն էջ 78 (180).
 6. Սճ, էջ 104 (186).
 7. Բզվգ. 1926 էջ 111.

էջ. սող.

էջ. սող.

ձԱՌ ԿՐ.

Իդիտանէ զմուրրութիւն Պրոսպերի վասն նախագաղափարաց

(18)

(18)

16 Իդէտ 205-6 Ուտտի և Նորթի աղանդացն ազնկերոց նովին զանդաչն: Ինչ թէ որպէս Աստուած էութեամբ էր ի բնէ, Նոյն պէս և Հիւն. և Իդոսն այս սինքն նախաորոյս

11 Իդոս

14-15 Ուտտի և աղանդացն առևալ նովին զանդաչն թէ որպէս Աստուածն էութեամբ էր Նոյնպէս Հիւնն և Իդոսն

Իդոս

(ճոյճ ընդ Վ.)

206 4 և Հիւնէ այն Նիւթն 207 20 որ անբաժին և անքանակ է: անհատ և առանց մասանց է:

20

226 24 և Հիւնդայն Նիւթն որ անբաժին և անքանակ է: անհատ և առանց մասանց է:

(ճոյճ ընդ Վ.)

(ճոյճ ընդ Վ. և Ջմ.)

վայրէ ոք անդր մի՛ ժտեսցի երթալ: Աս ամբողջական հաստատած կը պակսի Ջմ. օրինակին մէջ, Բգրտ-Գէորգեաննէն աւելցուած է. յաւելուած մը սակայն որ արդէն Աճ. Ջ.ն ունի, որով ոչ թէ քամահա այլ Զ. Ի հեղինակութեամբ. այլապէս չափազանց պատել պիտի ըլլար ըսել թէ Բազրատունին յաջողոր է գուշակել բառ առ բառ ամբողջ իւրոք մը զոր առկը չունէր:

221, 2. — Ինչ ինչ է ուղիւ ձնը զոր սրբապատ է Բգրտ. Ջմ. օրինակին վրայ՝ հմմտ. Աճ. Ջ.ին. սակայն տպագրի վրիթակով միայն մէկ ինչ դրուած է:

Նոյն համարին մէջ Ջմ. տպ.ին տարապայման խանդը ամէն հոլով գ-ով կազմեր է. Բգրտ. ամէնքն ալ սրբապատ է:

222, 12. — «Եւ գովիս յուտել՝ եթէ վասն զկարիս մարմնոյն խափանելոյ հրամայէր, բարոյք և յիրաւի առնէր. ապա եթէ իբր ի պղծոյ իմեթէ արարածոց հրամայէր հրոժարել, վատարարագոյն»։ Վատարարագոյնը կը պակսի Աճ. Ջ.ին մէջ, սակայն կը տեսնեն ընթերցողք որ անհրաժեշտ է համեմատութեան համար, ուսկից անզամ մ'ալ յայտնի կ'ըլլայ նախ Գէորգեան Ջ.ի նախընտրութիւնը Աճառեան Ջ.էն. երկրորդ նոյն փաստը կ'ապացուցանէ երկու ձեռագիրներու ոչ նոյնութիւնը, և երրորդ Բազրատունիի հաւատարմութիւնը. երեքն ալ անխախտ փաստեր որոնց զէմ մագաղան է Աճառեան և իր հետ ուրիշներ:

222, 13. — Վենետիկեանին « մտեղիս»ը պարզապէս տպ.ի սխալ է, քանի որ Ջմ. մտեղիսն է զոր չէ փոխած Բգրտ.:

223, 17. — «Եւ հինգամեայ լուութիւնն զոր նոր յաշակերտութիւն եկելոցն սահմանեաց»։ այսպէս ունին Ջմ. և Գէորգ-Բգրտ. մինչ Աճ. Ջ.ը նորա կը դնէ փոխանակ նորի: կը համարինք որ նորն ըլլայ ուղիղը քանի որ իմաստը լաւ կը բացատրէ. և ստուգել հինգամեայ լուութիւնը պարտք էր անոնց որ նոր աշակերտ կ'ըլլային, հինգ տարիէն վերջ ալիս կը դադարէր:

Թողունք որ նորա՝ առանց նախորդի՝ քերականորէն սխալ է. պէտք էր ըլլալ զէթ ի նորա աշակերտութիւն և կամ յաշակերտութիւն նորա, բայց ոչ երբեք նորա յաշակերտութիւն:

226, 23. — «Որ անբաժին և անքանակ և անհատ և առանց մասանց է»: Նորոյրէ՛ կ'ուզէ ուղղել անքակ՝ նկատելով անքանակ իբր ոչ-սովեդարեան ձե սպրդած Եղնկի հայկաբանութեան մէջ, և կը համեմատէ 235ի հետ, ուր անքակ է, ինչպէս նաև մէջ բերած կարգ մը օրինակներ՝ Ազաթանգեղոսէն, Սերբիանոսէն ևն:

Նորայրի հետեւողութեամբ Գալեմբեար՝ ալ որդեգրած է անքակը իր թարգմանութեան մէջ և Բարգէն՝ Ս. ալ՝ հաւանորէն անկասկ Նորայրէն և Գալեմբեարէն, «Պէտք է ուղղել անքակ» կ'ըսէ:

Ընկնք չենք կրնար հաւանիլ այս առաջարկին քանի որ նախ Ջմ. Գէորգ-Բգրտ. և Աճ. Ջ.ը միաձայն անքանակ ունին. յետոյ անքանակը միայն կը պատշաճի հոս, վասն զի իւրօք ճաստուածեղէն չունին» վրայ է, որ բուն անբաժին և անհատ և առանց մասանց է՝ քանակ չունենալուն համար, ուստի անքանակ. մինչ ընդհակառակն անքակը կարծես կ'ենթադրէ բարդ բան մը (հակառակ աստուածեղէն չունի պարզութեան) որ սակայն այնպէս զօգուած է որ անքակ կը մնայ. յայտնի է որ սխալ է վերջին ենթադրութիւնը. ուստի կարիք չկայ անքանակը սրբագրելու:

(Շարունակելի)

Հ. ԵՐԱՍ ՓԵՅԻՍՅԱՆ

1. Քննադատ էջ 10-11.
2. ՔԵՅՄԵ ԱՆ Էջ 78 (160) (Ժան.Պ.)
3. Հանդէս Ամ. 1907, 814.